ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2017-5-1-Ա

ք. Երևան 02.08.2017թ.

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2017 թվականի օգոստոսի 2-ի նիստում քննարկեց 2017 թվականի հուլիսի 20-ին արտոնագրային հավատարմատար Ալբինա Նազարյանի կողմից ներկայացված՝ «Սանֆուդ» ՍՊԸ (Կոտայքի մարզ, գ. Զովունի) ընկերության «ИВ Империя вкуса» (No20161592) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.
«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) 10-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի համաձայն ապրանքային նշանի գրանցումը ենթակա է մերժման, եթե այն կարող է շփոթություն առաջացնել հայտի ներկայացման թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում կամ նրա տարածքից դուրս օգտագործվող ապրանքային նշանի նկատմամբ, որը դեռևս օգտագործման մեջ է գտնվում, պայմանով, որ հայտը ներկայացնելիս հայտատուն գործել է անբարեխիղճ: Հայտատուի գործողությունը համարվում է անբարեխիղճ, եթե հայտը ներկայացնելու պահին հայտատուն գիտեր կամ կարող էր իմանալ այդպիսի ապրանքային նշանի առկայության մասին: Տվյալ դեպքում հայտարկված ապրանքային նշանը ենթակա չէ գրանցման, քանի որ այն կարող է շփոթություն առաջացնել նույնատիպ ապրանքների համար «ПАО ГРУППА ЧЕРКИЗОВО» ընկերության կողմից օգտագործվող և http://cherkizovo.com/brands/imperiya-vkusa/?sphrase_id=18867 կայքում գովազդվող ապրանքային նշանի նկատմամբ, որի մասին հայտատուն կարող էր իմանալ:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու և կրկնական փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու վերաբերյալ, քանի որ բողոքում բերված

չեն փաստեր կամ հիմնավորումներ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի համաձայն կրկնական փորձաքննության որոշման մեջ նշված «ПАО ГРУППА ЧЕРКИЗОВО» ընկերության կողմից օգտագործվող և գովազդվող ապրանքային նշանի օգտագործման փաստը մերժման հիմքում դնելու ոչ իրավաչափ լինելու վերաբերյալ: Բացի այդ նշվեց, որ առկա է ավելի վաղ առաջնությամբ մերժված ապրանքային նշանի բառային տարրին նույնական ապրանքային նշան նույնական ապրանքների համար, որը նույնպես մերժվել է նույն հիմքով և ինչը ևս խոչընդոտ է տվյալ ապրանքային նշանը գրանցելու համար:

Բողոքարկողը համաձայն չէր կոլեգիայի ներկայացրած նախնական կարծիքի հետ:

Փորձաքննության բաժնի պետը պնդեց, որ որոշումը իրավաչափ է և բաժինը որոշումը կայացրել է ելնելով օրենքի դրույթներից:

Քննարկման արդյունքում համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել արտոնագրային հավատարմատար Ալբինա Նազարյանի կողմից ներկայացված՝ «ИВ Империя вкуса» (No20161592) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը և փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ԳԱՐԵԳԻՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ